




ՈՒՅՏԻ ԵՎ ԱՂՈԹՔԻ ԽԱՉՔԱՐ. ՄԱՅՐԱՆԻ ԱՐԴԱՐԱՆԻ ՄԱՅՐԱՆԻ ԱՐԴԱՐԱՆԻ ՄԱՅՐԱՆԻ



ԽՏԻՆՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵՌՆԻ 60-ԱՄՅԱԿԸ (1915—1975)

Ապրիլյան եղեռնի 60-ամյակն է:

Համայն հայությունը, որ ի հայրենիս և ի արտոն աշխարհի, արժանավայել լրջությամբ, համագգային հանդիսությամբ և սրտառույզ համերաշխությամբ նշում է հայ տառապանքի և մեր հավաքական մահատակության վաթսուամյակը:

Հայոց Հայրապետը 1975 թվականի ս. Ծննդյան տոնի Իր գեղեցկահյուս քարոզում նշում էր.

«Բայց տարին մեկ անգամ, ամեն ապրիլի 24-ին, հայ ժողովուրդը մի պահ կանգ է առնում և հարգանքով խոնարհվում իր մահատակների հիշատակի առաջ: Դա մարդկային է, դա քրիստոնեական է, դա բարոյական է:

... Ամեն հայ հավատացյալի, ամեն հայ մարդու հոգում մշտավառ է մնալու մի ճրագ ի հիշատակ Ապրիլյան եղեռնի զոհերի: Այդ սուրբ հիշատակը երբեք չի թառամելու: Ապրիլյան մահատակները կմոռացվեն այն ժամանակ միայն, երբ հայ ժողովուրդը դարձի նրանց հիշատակը ոգեկոչելուց, երբ դադարի նրանց ազգային տեղանքները իր սրտում վառ պահելուց, ու մանավանդ երբ դադարի անասկարկ կերպով նվիրվելու՝ իր վերածնված մայր երկրի վերաշինությանը, անվտանգությանն ու խաղաղության գործին»:

Հայ հավատավոր ու հայրենասեր ժողովուրդն ամեն տեղ, Եղեռնի 60-ամյակի

առիթով, երկյուղած քարեպաշտությամբ ոգեկոչում է անմոռաց հիշատակն իր մահատակների, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» հերոսական մարտում:

Վաթսուն տարիներ են անցել մեր սրտերը բզկտող, մեր հոգիները փոթորկող, մեր աչքերը կրակե արցունքով և անսահման վշտով ողողող սև օրերից, բայց դեռ հին վերքը բաց է, այրում է և այրում մահա նրա համար, որ «քրիստոնյա» համարված որոշ եվրոպական պետություններ ողբալիորեն ուխտադրած գտնվեցին մեր ազգի, մեր դատի հանդեպ և թույլ տվեցին, որ օրը ցերեկով քաղաքակիրթ մարդկության հնագույն և թանկագին մեկ մասնիկը կազմող, Արևելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, մեր շինարար, մեր աշխատասեր ու խաղաղասեր ժողովուրդը, որը ապրում էր խաղաղ ու բարօր իր հայրենական, պատմական հողի վրա, ենթարկվի անլուր ցեղասպանության: Դա երիտասարդ թուրքերի կառավարության կողմից պետականորեն կազմակերպված ցեղասպանությունն էր, կայգերական Գերմանիայի գիտությամբ և քաջակությամբ:

«Հանուն մարդկայնության և արդարության, հանուն ժողովուրդների համերաշխության և խաղաղ գոյակցության, երբեք չպետք է մոռացվեն անցյալի արհավիրքներն ու չարիքները, մահատակություններն

ու ցեղասպանությունները... որպեսզի հետ այսու այլևս երբեք և ոչ մի տեղ աշխարհում, չկրկնվեն Տեր-Էլ-Ջորներ և Աուաշվիցներ, Ռասուլայներ և Մայտանեքներ», պատգամում է Հայոց Հայրապետը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր նահատակներին:

Այո՛, կատարվեց կատարվելիքը... հայության գլխի վրա կախված մեծ աղետը եկավ ու անցավ...

Անցան վաթսույն տարիներ... Վիշտը մնաց և փոխակերպվեց ուժի, կյանքի, ստեղծագործ կամքի, հավատի:

Եղեռնի 60-ամյակն է, բայց մենք, որպես եկեղեցի և ժողովուրդ, «ոչ յօժարիմք գոշտառութիւն մերոյ ազգիս ողբալ» (Եղիշե):

Պատմությունը մեր ժողովրդի ճակատին գրել էր ոչ թե ՄԵՌՆԵՆ, այլ ԱՊՐԵՆ և ՍՏԵՂՍԱԳՈՐԾԵՆ:

Ապրում է այն ժողովուրդը, որ ստեղծագործել գիտե, որ կյանք ու առաջադիմություն է ստեղծում, որովհետև մշակույթը հոգեկան ուժերի գիտակցական ստեղծագործությունն է. և առաջադիմության ընդունակ մի ժողովուրդ չի կարող մեռնել:

Ժողովուրդները, և մանավանդ մեզ նման փոքր ժողովուրդները, հավաքական մաքառումներ են, խիզախումներ: Ժամանակավոր պարտություններն ու նահատակությունները չեն որոշում նման ժողովուրդների կյանքն ու ապագան:

Ժողովրդի մեծությունը չի չափվում նրա քանակով, այլ նրա հոգու հարստությամբ, նրա մտավոր լուսավորությամբ, նրա ստեղծագործ ճիգերով և պատմական իրագործումներով:

Երբ մի ժողովուրդը կուլում է և նույնիսկ նահատակվում՝ իր ազատության և իր գոյության համար, նա ապրում է, չի կորչում: Այդ գիտակցությունը, հոգեկան այդ վստահությունն անստիկ բերդ է, որին չի կարող տիրել ոչ մի թշնամի:

Այո՛, հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել բախտի հարվածներից և կարողացել է իր նահատակությունը վերածել հաղթանակի:

Այո՛, նահատակներն են, որ գորացրին հայության հավատը հայության վրա:

Մեր ժողովուրդը եղեռնի օրերին գտավ իր կամքի միությունը և ազգովին վերածնվելու, ապրելու վճռականությունը: Ծառ ու շատ տեղեր հայ դիմադրական շարժումը հզոր թափերի հասավ և պսակվեց փառավոր հաղթանակներով: Մեր ժողովրդի ազգային-ազատագրական պատմության էջերում հերոսական տառերով արձանագրվեցին Մուսա լեռան, Վանի, Սասունի, Ծապիկ Գարահիսարի, Ուրֆայի, Մուշի, Ծառախի ինքնապաշտպանության սիրահանքները:

1920 թվականի նոյեմբերին, այդ ծանր ու ճակատագրական օրերից հետո, մեր ժողովրդին եղբայրական օգնության բարի ձեռք է մեկնում ռուս ազնիվ ժողովուրդը:

Պայծառանում է Հայոց երկինքը:

Փարատվում է ծանր մղձավանջը:

Մեր ազգային ճշմարիտ վերածննդյան հուսալի սկիզբն է դրվում: Հայ ժողովուրդն այնուհետև իր փրկության հույսը ընդմիշտ կապում է ռուս ժողովրդի հետ, որը նրան ոտքի է կանգնեցնում, բուժում նրա վերքերը բարի սամարացու նման, խաղաղության, սպասկություն, առաջադիմության պայմաններում:

Նոր կյանքի է կոչվում հայ ժողովուրդը: Սկսում է վերաշինել հայրենի իր բույնը: Կատարվում է մեր նահատակների երազը. հայ ժողովուրդը ստեղծում է հայրենիք, պետականություն, ապահով ու խաղաղ կյանք: Մեր ժողովրդի հավերժորեն ապրելու երաշխիքը մեր այսօրվա վերածնված հայրենիքն է:

Այո՛, այսօրվա մեր պանծալի, մեր սիրելի Սովետական Հայաստանը մեծագույն ու փառավոր հուշարձանն է մեր նահատակների:

Հավերժական փա՛ռք մեր բյուրավոր նահատակներին:

Փա՛ռք Ապրիլյան եղեռնից հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդին:

Փա՛ռք մեր վերածնված մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Ա. Հ.

